

ԾԱՂԻԿ ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՇԱՐՔԻ ԵՐԵՐԸ ԵՄ
ՄԱՐԿԻՆ 50 ԹԻՆ:

Բաժանորդագիրն ԿԱՆԻՍԿ՝ Թուրքիոյ համար
տարեկան 50 զրշ, Ռուսիոյ համար 5 ռուբլի,
ուրիշ երկիրներու համար 12 ֆր. — Վեցամսեալ
բաժանորդագրութիւն եւս կ'ընդունուի:

Գաւառներէն դրամի տեղ Օսմանեան Նա-
մակագրով՝ եւս կ'ընդունուի:

Միայն երեք թիւ ապառիկ կը դրկուի. այնու-
հետեւ բաժանորդագիրն չը վճարողը կը դադրի
թերթ ընդունելէ:

Մանուցման տողը 2 զուրուշ:

ԾԱՂԻԿ

Հ Ր Ա Գ Ի Ր

ԾԱՂԻԿԻ ՎԵՐԱԵՐԵՎԱԼԱԾԷՆ ԳՈՐԾԻ ՀԱՄԱՐ ԳԻՄԵԼ
ՍԵՐՏՈՒՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԻԿ
ՅՈՎՆԱՆ Գ. ՓԱԼԱԿԱՇԻԱՆ
Պալիս, Պաղէ-Կափու, Շէիք-ու-Իսլամ Խան
درعاليه ده بغچه قوسنده شيخ الاسلام خاند
«زاغيك» غزى مى مديرى بالا قشيان حوونان
S'adresser à
HOVNAN PALACACHIAN
Directeur du journal armenien « Dzaghik »,
Bahtché-Kapou, Chèikh-ul-Islam Han
CONSTANTINOPLE

40 Փարա

Ազգային, Բաղաժական եւ Գրական

40 Փարա

ՆՈՐ ՇՐՋԱՆ — Գ. ՏԱՐԻ. ԹԻՒ 31

Շ Ա Բ Ա Թ

14 ՕԳՈՍՏՈՍ 1893

ԽՄԲԱԳԻՐԱՊԵՏ Ա. Ա. ՍՈՒՐԵՆՅԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Ո՞վ է պատասխանատուն, Արուսեակ,
Սխալ ըմբռնում, Լ. Մկրտիչեան,
Ուսուցչական ժողով, Գր. Մարգարեան
Թուականներու շփոթութիւն, ...
Հետաքրքրական դատ մը,
Թղթակցութիւն Երուսաղեմէն:
Մեր հորիզոնէն դուրս:
Շարժումն Ազգային եւ Ներքին լուրերը:

Ո՞Վ Է ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

Առ հարկի այս աւուր յետաձգուեցաւ
Տիկին Արուսեակի յետագայ նամակն որու
հրատարակութիւնը խոստացած էինք ընել
երեք շաբաթ յառաջ. ապիւն Տիկինը նե-
րուրթիւնը կը խնդրենք:

Ազնիւ գաստիարակս.

Հայ կնոջ վրայօք Ձեր գրած յօդ-
ուածներուն իբր բնական շարունակու-
թիւնն՝ կ'սպասէի կարդալ Հայ երիտա-
սարդութեան նկատմամբ Ձեր տեսու-
թիւնները: Տեսայ շաբաթ աւուր Ծա-
ղիկը, ուր այդ մասին ոչինչ գտայ: Ո՞ր-
քան անհամբեր ես ու պահանջկոտ,
պիտի ըսէք դուք: Ընտա-
նեկան կենաց վերաբերեալ խնդիրները
կը նկատեմ ծայրագոյն աստիճանի կա-
րեւոր, եւ մեր ժողովրդեան արդի կա-
ցութեան հանդէպ, խիստ ալ ստիպո-
ղական: Հայ կնոջ մասին ձեր յայտնած
գաղափարներուն ումանց համակարծիք
չըլլալս կրնայի՞ արդեօք յայտնել: Թե-
րեւս ընդ-գիմախօսելու պէտք չէր մնար՝
երբ ամբողջովին Ձեր հայեացքը պար-
զէիք Հայ մարդուն նկատմամբ ալ:

Եթէ դժգոհ էք Հայ կնոջ կենցա-
ղէն, զ՞ի պատասխանատու կը ճանչէք.
զայս կ'ուզէի գիտնալ: Համեստութեան,
տեսչութեան, անձնութեան, մարդասիրութեան,
եւ, ըսեմ, դեղեր-
կութեան ու սիրունութեան մասին նոյն
խոյն գովեստներով եւրօպացի մեծա-
նուն հեղինակներէ փառաբանուած Հայ
կինը միշտ ապրած է Հայ էրիկ
մարդուն միահեծան ազդեցութեան
ներքեւ: Վերջին երեսուն տարիներու մի-
ջոցին աղջկանց վարժարաններու ու դ-
ղութիւնն յանձնուած էր գլխաւորապէս
այրերու հսկողութեան: Հայ աղջիկը

մեծցաւ այնպէս՝ որպէս Հայ այրերը
զինքը պատրաստեցին: Եթէ կինը նո-
րաձեռութեան ու զարգացման թիւան հե-
տամուտ է, այդ իր բնութեան պա-
հանջն է զոր անյիշատակ դարերէ ի վեր
գոհացնել կը փափաքի: Բան մ'որ իւր
զեղեցիկութիւնն ի յայտ կը բերէ եւ իւր
հրապոյրը կ'աւելցունէ: Բայց եթէ Հա-
յուհին նորաձեռութեան ու զարգաց-
ման մօտի եղաւ, այրերն ըրին զայն այն-
պէս: Մեր գրագէտներն ամէն ամիս
հաղորատու տողեր կը նուիրեն վերջին
մտաւորութեան ու կը դրեն ոճով մ'որ
զգացնել կուտայ թէ շրջագոյ կուտի կամ
գուշային այս ինչ նուիրական գոյնե-
րուն չը համակերպող կիները զուրկ են
ճաշակէ, եւ չարժեք անոնց երեւոյնայիլ:

Հաւատացէք որ եթէ կանայք ալ
լրագիր հրատարակելով գրէին թէ ծը-
րար մը կ'ապոյտ ամէրիքանով չը պլլուող
այրերը շատ կոշտ ճաշակի ապացոյցը
կուտան, բազմաթիւ երիտասարդ-ք այդ
ծիճաղաչարժ հաղուստով պիտի զգես-
տաւորուէին:

Եթէ Հայ կանանց մի մասն իր զա-
ւակներն ու խոհանոցը թողով պարա-
հանդէս դիմեց, այդ գիմախօս ինքնա-
բերարար տեղի չունեցաւ: Իր ամուսինն
ու եղբայրը զինքը հոն առաջնորդեցին:
Տգեհտ ու անփորձ, կարծեց նա թէ քա-
ղաքակիրթ ու լուսաւորեալ կը գառնայ
զգլխի միջնորդութեան մէջ մտնելով:

Եթէ Հայ աղջիկն իւր նախնին հա-
մեստութեան քօղը քիչ մը վեր առնե-
լով սկսաւ առանց ընտրութեան համար-
ձակ մուտ գործել երիտասարդներու
ընկերութեանց մէջ եւ համակերպիլ ա-
նոնց ճաշակին, պատճառը փնտռելու է
այն գրական հրատարակութեանց մէջ
որ՝ արդէն սկսած աւերամբ բաւական
չը սեպելով՝ համարձակեցան լրագրա-
կան առաջնորդող յօդուածներու մէջ
հեգնել Հայ աղջկան շիկնոտութիւնն, եւ
բազմաթիւ զայն օտարազգի աղջկանց
հետ, նուազ սիրուն, նուազ հրապու-
րիչ, նուազ պարզ գտան ...:

Եթէ Հայ աղջիկը տանտիկնոջ ծան-
րութեան ու ժրջանութեան մասին
թերացած կը նկատուի, պէտք չէ զինքը
գատապարտելու աճապարել: Այրերը
վարժարաններու մէջ փոխանակ աղջիկ-
ները ճամբարի տան տիկին պատրաստե-
լու, փոխանակ իր մօրմէն ուսած եւ ի-
րեն երկրորդ բնութիւն եղած այդ գե-
ղեցիկ ձիրքերն եւս առաւել աղնուացը-
նելու պէպէքներու պէս զարգարել ու-
ղեցին զինքը, տանտիկնութիւնը մոռ-
ցնել տուին իրեն: Ի՞նչ կ'ըսեմ, տան-
տիկնութիւնը գրեթէ ծաղրելի կացու-

յին եւ սաղմնի կրթութիւն մ'ընծայեցին:
Եւ այս թէ՛ աւանդուած ուսմանց առար-
կայներով, թէ՛ իրենց վրայ կատարուած
հսկողութեան եղանակաւ ու թէ՛ պար-
զեւարձութեան նման ծաղրելի հան-
գէտներով:

Թէ՛ վարժարանաց եւ թէ՛ խիտաշատ
տուններու մէջ՝ չեմ կարծեր որ այ-
րերու կողմանէ Հայ աղջիկներուն լուսա-
միտ գաստիարակութիւն մը տրուած
ըլլայ, զիրենք դնելու համար այնպիսի
վիճակի մէջ որ, ժամանակիս պահանջ-
մանց համեմատ, ըլլան արժանաւոր ամու-
սիններ ու մայրեր: աւելցուցէք այս ա-
մէնուն վրայ այն լպիրշ հրատարակու-
թիւններն որ մեր երիտասարդներուն
կրքերը կը փայտայեն ու անոնց սիրտն
ու ոտքերը կ'առաջնորդեն դէպ ի պըչ-
րուհիները: Բնտանի երջանկութիւնը
շատագոյն քանի՞ նորազգայ կը կար-
գանք տարւոյն մէջ: Բայց ամէն շաբաթ
անբարոյ սիրահարութեանց պատմու-
թիւններով կը լեցուին մեր գրական
թերթերուն սիւնակները՝ ընթերցող ե-
րիտասարդին բերնին ջուրերը վազու-
նելու կերպով գրուած, եւ ալ մնան բա-
րով Հայ աղջիկներն ու իրենց համես-
տութիւնը, բնտանի յարկն ու իր սըր-
բութիւնը, ամուսնութիւնն ու իր նուի-
րականութիւնը: Ու այսպէս ամէն կողմէ
Հայուհւոյն առաքինութեանց դէմ այ-
րերու գաշնակցութեան հանդէպ, պա-
հանջել որ նա մնայ միշտ ու առանց
բացառութեան այն գովանի վիճակին
մէջ ուր օտարք անգամ կը փառաւորէին
զինքը, այս պահանջն է որ Արեւուն հը-
րակէզ ջերմութեան տակ գրուած ափ
մը ձիւնը չը հալի:

Յարգելի գաստիարակս, դուք ու-
սուցիք մեզ ընկերական յոռի ու լաւ
երեւոյթներուն խիական պատճառները
գտնել: Եթէ այդ սկզբունքն ի դուրծ
գնենք Հայ ընկերութեան համար, Հա-
յուհին գատել ու գատապարտել պիտի
չփութանք:

Չարիքը կայ, եթէ ոչ Ձեր ըսած չա-
փով, բայց կայ վերջապէս: Իմ խոնարհ
կարծիքս է թէ այրերն եղան այդ չար-
եաց պատճառ, նորա փութալու են
գարմանն ի դուրծ գնել, քիչ ատենէն
Հայ կնոջ այժմու տարաբաղդութիւնը
գուցէ շատ թեթեւ նկատուի իրենց են-
թարկուելիք դժբաղդութեանց քով:

ՍՐՈՒՍԵԱԿ

ՍԽԱԼ ԸՄԲՈՒՆՈՒՄ

Այն շատ մը պիտի ըմբռնուին և մէջ, որոնք մեր ազգային պաշտօնէութեանց ուղղութիւնը կը խանգարեն, կարեւոր տեղ մը կը գրաւէ քննադատութեամբ երկրորդ կամ անկէ բղխած դիւրագոյնութիւնը:

Սխալ, հարեւանցի տեղեկութեանց վերայ հիմնուած կամ չարամտութեամբ յերկրորդ քննադատութիւններ արդարեւ կրնան ըլլալ, բայց պէտք է ընդունիլ թէ դրութիւնը ինքնին օգտակար է և միակ բանալին սխալները մասնաւոր ընկելու: Մեք ի մասնաւորի ծանրանալ կ'ուզենք այն դժուարութեան վրայ զոր ազգայնոց ոմանք ցոյց կուտան քննադատութեան մասին, և իրենց յիշեցնել թէ պաշտօն մը ճիշտ ստանձնելը չրաւեր զայն ամէն քննադատութենէ վեր պահելու: Վարժուելու ենք որ ճիշտ ստանձնուած պարտականութիւն մը նոյնչափ պարտականութիւն է որչափ թողակաւորը: Եւ ինչպէս որ թողակաւոր պաշտօնեայն իր մէկ թերութեանը համար քննադատութեան առարկայ կրնայ ըլլալ, նոյնպէս ալ քննադատութեան առարկայ է և պէտք է ըլլայ ճիշտ պաշտօնեայն: Երբ մէկ մը այս գաղափարին վարժուի, ա'լ այնուհետեւ մեզի ծանր չգար քննադատական դրութիւնը մեր ստանձնած պաշտօնի մասին:

Բայց եթե դրութիւնը որ անիրաւ քննադատութիւններ կ'ըլլան մեզի դէմ, այն ատեն իրաւունք ունի՞նք ասպարէզէն հեռանալու, ինչպէս սովորաբար կ'ընենք, յայտարարելով թէ այսինչին դէմ վշտացած ենք: Այդ իրաւունքը բնաւ չունենալէ զատ, պաշտօնէ հեռանալով պարզապէս մեր ետականութեան մէկ ազատցոյցը տուած կ'ըլլանք: զի եթէ քիչ մը տարալուծենք հըրաժարողին զգացումը՝ հոն վրէժխնդրութեան պէս բան մը պիտի գտնենք քննադատողին դէմ: «Ահա ես կը հրաժարիմ, թո՛ղ գործերը երեսի վրայ մնան, դուք ալ սորվեցէ՛ք թէ ի՞նչ կը նշանակէ անիրաւ տեղը մտաւ դժուարեանը:» Շիտա՛կը խոստովանինք, ասոր պէս մտածումներ չեն անցնիր մեր մտքէն այսպիսի պարագայերու մէջ: Բայց քիչ մը մեր այս ընթացքին վրայ խորհինք և տեսնենք որ նոյն իսկ մեր ետականութիւնը՝ գոհացում կը գտնէ՞ այս կերպով: Ենթադրենք թէ ձեր հանրային մէկ պաշտօնին համեմատ այսինչը թշնամունեց զձեզ, նիւթական թէ բարոյական ի՞նչ մասնաւոր միտա հասուցած կ'ըլլաք իրեն, երբ ասպարէզէն կը հեռանաք: Եթէ իրօք ձեր աշխատութիւնը բան մը կ'արժէ՞ միտա ու հանրութեան հասած կ'ըլլայ, և այն ատեն ի՞նչ տրամաբանութեամբ անհատ մը կամ անհատներ հանրութեան համար պատասխանատու բանէ: Մեք ընդհակառակն կը խորհինք թէ պաշտօն ստանձնող անձը միակ գլխաւոր նպատակի մը ծառայելու է՝ հանրային օգտին: Երբ կը համոզուի թէ այդ օգուտը ընկելու կարող է, առանց ասոր անոր քննադատութեան ահանջ կ'ախելու, պէտք է իր պաշտօնը շարունակէ, միևնոյն ատեն հանրութեան առջև ինքզինքը արդարացնելով՝ իրեն զէմ եղած անտեղի քննադատութեան մասին:

ԼԵՒՈՆ ՄԿՐՏԻՉԵԱՆ

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Նախորդ յօդուածի մը մէջ խօսելով ի մօտայ տեղի ունենալիք Ուսուցչական Ժողովներու վրայ, կ'ըսէի թէ «Նախորդ տարիներու մէջ արուած որոշմանց արդիւնքն ինչ որ ալ եղած ըլլայ, դարձեալ օգտակարութենէ զերծ չեն այդ Ժողովներն՝ քանի որ ուսուցիչք զիրար կը ճանչեն, կրթական այլ և այլ խնդրոց վրայ կ'արձեացնեն փոխանակութեամբ զիրար կը լուսաւորեն, ևն:»

Արդ՝ ներկայ դպրոցական տարւոյ Ուսուցչական Ժողովոյ առաջին նիստը տեղի ունեցաւ այս երկու շաբթիկի օր, ի ներկայութեան 40 ուսուցչաց՝ որոց մէջ գործադրարար կը գտնուէին բաւական թուով կարեւոր անձնաւորութիւններ: Սակայն չմոռնամ ատէական պարագայն ի վեր հանել որ՝ այս տարուան օրակարգին խնդիրներն՝ նիստին թուականն հազիւ 10-15 օր առաջ միայն հրատարակուած էին և իրենց բացառիկ կարեւորութեամբ չէին նմաներ նախորդ երկու տարիներու պարզ օրակարգերուն: Այս եղած է ահա գլխաւոր պատճառ՝ որ ուսուցիչք տարեկան քննութեանց երկար շարժարանքէ յետոյ՝ երբ հիմա քիչ մը հանգիստ պիտի վայելեն՝ չկարողացան այդ խնդիրները լրջօրէն իմաստասիրել և մանաւանդ խորհուրդ հարցնել մէկէ աւելի մասնագէտներու, քանզի աւելորդ է ըսել թէ այդ ատեսի խնդիրներու վրայ խօսիլ ու գրելն՝ չնմանիր լրագրի սիւնակները ծածաղաչարժ անհամ յօդուածներով մրտելու: Այդպիսի յօդուածներ գրելու մէջ մեծ յաջողակութիւն ունեցող գրիչ մը՝ օրաթերթի մը մէջ գաւեշտական հանգամանք մը տուած է նոյն նստի նկարագրութեան, և ի միջի այլոց՝ իմ անձիս նկատմամբ ալ վիրաւորիչ ակնարկութիւն մ'ըրած է, չըզիտեմ ինչ պատճառէ թեւադրեալ:

Այնիւ Պաշտօնակիցներէս շատերը գիտեն թէ՛ ամէն մ'աւելի է՝ զլիտ անտանելի ջերմէ մը կը տառապիմ և հետեւապէս չափազանց տկարացած եմ: Բէ՛, օրն իսկ բժիշկէ վերադառնալով՝ Ժամ 8 ին կը մտնեմ ի ժողովարանն՝ այն պահուն՝ երբ Ատենադարանը ընտրութիւնը պիտի կատարուէր: Ներկայից ոմանց հետ իմ անուն ալ ցանկին մէջ կը գրուէր: Այն ատեն հարկ կը համարիմ՝ գործը չը զժուարացնելու համար՝ կանխաւ խնդրել Ատենադարանէ ֆինանսին որ իմ անունը դուրս ձգէ ցանկէն, որովհետեւ, կ'ըսեմ, հիւանդ եմ, տկար և չեմ կարող այդ պաշտօնն ստանձնել: Առ այս՝ պաշտօնակիցներէս Բ. Էֆ. Թադէոսեան, ի ներկայութեան Բաղապահ ուսուցչաց կը պատասխանէ ինձ թէ՛ «մի՛ աճապարեք, քուէին արդիւնքին սպասէ» և ո՛չ թէ «ինչ իրար կ'անցնիս կոր, կարելի է քեզի քուէ մ'անգամ տուող չի պիտի գտնուի» վիրաւորիչ սո՛ով, ինչպէս տեղեկատու պարտը գրած էր՝ պարզապէս Թոհաֆ բան մ'ընելու նպատակաւ:

Չարմանալին այն է որ, դարձեալ այդ 40 ուսուցչաց ներկայութեան, Պ. Կեղեկատուն ճիշդ քովի կը նստած և միևնոյն օրաթերթին մէջ իրեն աշխատակիցը գրուած ու տակաւին դպրոցական համբալի հոսք բուրդը ուրիշ ուսուցիչ մ'ալ մերձեց ատենադարձ ընտրուիլ, յայտարարելով թէ իր անձէն պէտք է սպասել շատ աւելի բար-

ձրը ու գնահատելի օգուտներ...: Բոլոր ներկայք ծիծաղեցան. գուցէ տեղեկատուն այդ բոլորն աչքերը փակած էր ու ահանջները խցած...:

Ո՛ր փնտռենք խղճամոտութիւնն ու անկեղծութիւնը:

Լրագրութեան պաշտօնեայնէր կան որ անմեղ անձնաւորութեանց պատիւը ծաղու նշաւակ ընել չեն խղճար, երբ վստահ են թէ ոչ ոք յանուն օրինաց պիտի պահանջէ իրենց սանձահարութիւնը. այդ վստահութիւնն այլ եւս գոնէ թող չունենան իմ մասին:

ԳՐԻԳՈՐ ՄԱՐԳԱՐԵԱՆ

ԹՈՒԱԿԱՆՆԵՐՈՒ ՇՓՈԹՈՒԹԻՒՆ

«Ծագիկ»ի վերջին թուով՝ Մարգարեան Գրիգոր էֆէնտի «Ազգ. Մատենադարան» խորագրով յօդուածին մէջ ժամանակագրական սխալ մը սպրդած էր որուն ուղղելու կը խնդրեմ: Մատենադարանը հիմնուած, բացուած, կազմակերպուած է ոչ թէ 1885 ին, այլ 1876—1878 թուականներուն, ոչ թէ միայն Յակոբ Արշակի ջանքով, այլ Ստեփան Վ. Եազըճեանի, Ստեփան Էֆ. Փափազեանի, Յովհ. Ա. ԲՅ. Հիւնքեար. պէյնտեանի և Մկրտանի նախաձեռնութեամբ ալ:

1878-1885 թուականներուն Ղալաթիոյ Ս. Փրկչեան վարժարանին աշակերտք յաճախ Մատենադարանին այցելելու առիթ ունեցած են, մանաւանդ որ վարժարանին ուսուցիչներէն մին ալ նոյն հաստատութեան քարտուղարն էր: Մատենադարանի դարաններն լի էին գրքերով. հնութեանց համար ալ դարաններ կային, ազակեայ փեղկերով ծածկուած: Բաղամիջին հնութեանց մէջէն կրնամ յիշել մատանիներ, գրամներ ազգի ազգի, յիշատակարաններու բեկորներ, ամենն ալ, գրեթէ, գիտութեան պահանջմանց համաձայն դասաւորուած. այցելուաց, ընթերցողաց հանգստեան համար աթոռներ կային շարան շարան դարակներուն քով: Իսկ Մարգարեան էֆէնտի նշանակած 1885 թուականը քայքայման թուականն է: Հիմալ այդ սրահը կեդրոնական վարժարանի Սեղանատունը դարձած է ժողովականաց Խորհրդարանին կից: Այդ երկու Սեղանատուններն ալ իրենց փառաւոր անցեալն ունին. տանն կիլիկիոյ կաթողիկոսութեան վեհարանն էին երբեմն:

...

ԳԱՏԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴՈՒԹԻՒՆ

Ա. Ա. Սուրէճեան, իրաւագէտ-փաստաբան
ՎԼԱՑԵՆԻ, ԲԱՐԻՉՈՒ, ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ

Մասնաւորապէս Պոլսոյ Շէրիի, Էվլաֆի, Հուդուգի, Թիմարէթի դատարանաց վերաբերեալ նախնական, վերաքննական ու վճռաջնական դատերու փոխանորդութիւնը կ'ստանձնէ և կը կատարէ փութով ու խղճմտութեամբ: Պատրաստ է նաեւ և է դատական գործոց նկատմամբ դրաւորապէս իրմէ խնդրուած խորհուրդները տալու և օրինական միջոցներ ցուցնելու:

Գրասենեակ՝ Պահչէ-գարու Շէր-իւլ-իւլամ խան, թիւ 4:

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ԴԱՏ ՄԸ

Երեքշաբթի օր հետաքրքրական դատի մը ներկայ եղանք Բերայի դատարանին պատ-
ժական ճիւղին առջեւ :

Բնականաբար ընթերցողք կ'ենթադրեն
թէ նոյնպիսի դատարանի մ'առջեւ պատ-
ժական բնութիւն ունեցող իրողութիւն մ'է
որ պիտի պարզուի :

Դատին մէջ ամբաստանող և ամբաստան-
եալ կողմանք այնքան ծանօթ են հասարա-
կութեան որ կ'արժէ իրողութիւնն այժմէն
ծանօթացնել իրեն :

Ամբաստանեալն է Հայ գրականութեան
ներկայացուցիչներէն մին, Հայրենիք լրագրոյ
արտոնատէր և հրատարակիչ, միանգամայն
փաստարան՝ վկայեալ Բարիգու համալսա-
րանէն, Յովհաննէս էֆ. Շահնազար :

Ամբաստանողն է ծանօթ փաստարան
Նազարէթ էֆ. Սաչէրեան :

Սաչէրեան էֆէնտի կողմանէ փոխա-
նորդ կարգուած են երկու ծանօթ փա-
տարանք, Սիմոն էֆ. Թընկեր և Գրիգոր էֆ.
Զօհրապ :

Ատեանը ժամը 6 ին բացուելով, պաշ-
տօնական թուղթերու ընթերցումէն յետոյ,
Ընդհ. Դատախազի օգնական Գարրիէլ էֆ.
պահանջեց դատաւարութեան սկիւի :

Նախագահը խօսք տուաւ Գրիգոր Զօհ-
րապ էֆէնտի, որ սկսաւ ամբաստանու-
թեան տեղի տուող զէպքին պատմութիւնն
ընել : — Կաթոլիկ Հայոց Պատրիարքարանի
վճռով Յովհ. Շահնազար էֆէնտի մեծ
եղբայր Տօքթ. Բէնիամին պէյի և իւր կնոջ
միջեւ բաժանում մը տեղի ունեցած էր.
զաւակներէն մին՝ Եօթը տարեկան մանչ մը՝
հօրը քով մնացած էր. սա իւր զաւակը
քիչ մը տտենում համար իրենց դրացի և
բարեկամ Սաչէրեան բնտանեաց խնամոյ
յան ձեռք էր : Սաչէրեանք Պոյաճը-գիւղ ա-
մարանոց կը փոխադրուին, իրենց աւանդ
տրուած տղան ալ ի միասին : Տօք. Բէնիա-
մին պէյի կիներն ու կնոջ եղբայրը, չարաթ
օր մը, ցորեկէն վերջը, տունը էրիկ մարդ
չգտնուած մէկ ժամէն օգուտ քաղելու նը-
պատակաւ, Պոյաճը գիւղ Սաչէրեան էֆէն-
տի տունը կ'երթան տղան պահանջելու,
մինչդեռ Սաչէրեան Նազարէթ էֆ. այր և
կնոջ մէջ տեղի ունեցած զգաւթեան պատ-
ճառներուն տեղեակ ըլլալով և կնկան վար-
մունքը այդանկի դատելով, այդ կնոջ իւր
տունը դալը բացարձակապէս արգիլած էր :
Նոյն օրը, եղբայրն՝ Օննիկ էֆ. Սաչէրեան՝
գիւղուածաւ տունը կը գտնուի և տղան կը
մերժէ տալու : Տիկին Շահնազար և եղբայ-
րը կը վայրանան, ծանր խօսքեր կը փոխա-
նակուին ասոնց և Օննիկ էֆ. Սաչէրեանի մի-
ջեւ : Գոյր եւ եղբայր Պօլիս կ'իջնեն, չուն-
չերնին ուղղակի Շահնազար Յովհաննէս է.
էֆէնտի Սմարտաբանն առնելով, ու ե-
ղբուրթիւնը կը պտմեն : Սա՝ փոխանակ
եղբորը կողմը բռնելու և կամ չեղոք մնա-
լու, ինչպէս բանական էր, ստատիկ կը
յուզուի, առաւել քան թէ կիներ, և իրի-
կուան ժամը 12 1/2 ին միջոցները Բերայէն
կառք մը վարձելով, 2 1/2 ին Պոյաճը գիւղ
կը հասնի : Իրեն կ'ընկերանային իւր հարսին
եղբայրը Լեւոն էֆէնտի և անծանօթ մարդ
մը : Ասոնց նպատակն էր Տիկին Բենիամին

Շահնազարի գէմ իւր թէ ցերեկն եղա՝ անար-
գանաց վրէժը լուծել և աղան առեւանգել :
Կառքը գիւղէն դուրս շատ հեռու կը թո-
ղուն, և իրենք՝ Սաչէրեանց տանը գլխա-
ցի հասարակաց պարտէզին չալընդներուն
մէջտեղէն գաղտագողի գալով, յանկարծա-
կի կը մտնեն Սաչէրեանց տունն, որուն դը-
րանը առջեւ Տիկին Նազարէթ Սաչէրեան,
Օննիկ էֆ. Սաչէրեան և Մարկոս էֆ. Ա-
ղաբէկեան իւր ընտանեօքն հանգերձ նըս-
տած էին : Օննիկ էֆ. Սաչէրեան քանի մը
անծանօթներու այդպէս գաղտագողի գիշեր
ժամանակ տունէն ներս նետուիլը տեսե-
լով, ինքն ալ ետեւնուն ներս կը մտնէ, և
հագիւ քանի մը խօսք կը փոխանարկուի :
Շահնազար էֆ. կը յարձակի խեղճ Օննիկ
էֆէնտի վրայ և գաւազանի հարուած մը
կուտայ զլիւռն : այս նշանին վրայ միւս
երկուքն ևս կը յարձակին. երեք գաւա-
զանները Օննիկ էֆէնտի թեւերէն բըռ-
նելով, գետի՛ը երեսի վրայ կը պահեցնեն
և կ'սկսին ձեռքով, ոտքով, և գաւազանով
չարաչար գանակածել : Եթէ տանը գրան
առջեւ նստողները օգնութեան չհասնին,
խեղճին գործը լնացած էր :

Միջամտողներու շնորհիւ ծեծը վերջա-
ցած էր, երբ Շահնազար էֆէնտի գա-
լուստը իմաց կը արուի Սաչէրեան Նազարէթ
էֆէնտի որ վերը կը քնանար : Նազարէթ
էֆ. գէպքին անտեղեակ, գործը լոկ բանա-
կուի մը կարծելով, անոր վերջ մը տալու
համար իւր եղբայրը քովի տունը կը խրկէ,
և Շահնազար էֆէնտին հետն առնելով կեր-
թայ տանը գլխացը գտնուող պարտիզին
զէպ ի երկայնքը, և հոն կը ջանայ խօսք
հատկցնել : Բայց Շահնազար խօսք չը հա-
կընար, տղան կը պահանջէ և մինչեւ իսկ
սպառնալիքներ կ'ընէ : Սաչէրեան էֆէնտի,
խոհեմ մարդ, յարձակում չը կրելու հա-
մար գէպ ի ամբոխը կը յառաջանայ և հոն՝
տղան իրեն չը կարենալ յանձնելը կը
յայտարարէ : Այնատեն Շահնազար էֆ.
զայրացած, մինչեւ իսկ կը յանգանի հայ-
հոյեւ Սաչէրեան էֆէնտի, իրմէ երիցա-
գոյն և իրմէ և ամենէն յարգուած ընկերի
մը, ուրիշ միանգամայն բարեկամութիւն
և ծառայութիւններ տեսած էր : Սաչէրեան
էֆ. կը զատուի Շահնազար էֆէնտիէն և
զէպ ի տուն կը յառաջանայ : Շահնազար
էֆ. և իւր երկու ընկերներն ետեւէն կու-
գան : Սաչէրեան էֆ. կը պոռայ զգուռը գո-
ցեցէք, բռնեցէք այդ մարդիկը, ոստիկան
կանչեցէք և ձիւղդ այս միջոցին կառք մը կը
ներկայանայ պարտիզին անկիւնը, երեքն ի
միասին մէջը կը նետուին և կ'սկսին փոխիլ.
ամբոխը թէեւ կառքը կեցնել կ'ուզէ : Բայց
չը համարձակիր, վախճալով որ փախչողնե-
րուն քով գէնք կը գտնուի : Գովի տունէն
Օննիկ էֆ. Սաչէրեան, կերած ծեծէն և
ընդունած վէրքերէն թէեւ ընկճեալ վիճա-
կի մէջ, սակայն իւր եղբոր՝ « Թուրն »
զապթիյէ կէթիլին » աղաղակը և կառքին
վազքը լսելով, տունէն դուրս կը նետուի
և պարտիզին մէջէն կարուկ ճամբով անցը-
նելով, կառքին կը հասնի և կառապանը
վար տունելու կը ջանայ : յանկարծ կառքին
ներսէն ականջին գաւազանի հարուած մ'ալ
կ'իջեցունեն, Օննիկ էֆ. կ'իջնայ՝ կառա-
պանին խարաղանք ձեռքը, և կառքը արագ
վազքով կ'աներեւութանայ :

Զօհրապ էֆ. պատմութիւնն աւարտե-

լով, զարմանք յայտնեց թէ ինչպէս Յովհ.
էֆ. Շահնազար, իր ուսմունքն և այս օր-
ուան դիրքն իւր մեծ եղբորը հայրական
խնամոյ պարտական ըլլալով հանգերձ, փո-
խանակ անոր իրաւանց պաշտպան կանգնե-
լու, իւր այդ եղբորը տղան ձեռքէն խլելու
և անոր թողած կնկան յանձնելու կը ձեռ-
նարկէ : Ապա Զօհրապ էֆ. կարգ մը ծանրա-
ցուցիչ պարագայներ յառաջ բերելով, նշա-
նակեց այն փաստերը՝ որոյցմով կը հաս-
տատուի թէ յանցանքը կանխամտածու-
թեամբ գործուած էր :

Սիմոն էֆ. Թընկեր խօսք տուաւ և գոր-
ծին ծանրութիւնն յառաջ բերելով, յայ-
տարարեց թէ գործուածը պարզ յանցանք
մը չէ, այլ ոճիր մը : Ուստի խնդրեց դա-
տարանէն ըստ այնմ նկատել խնդիրը :

Ընդհ. Դատախազի Օգնական Գարրիէլ
էֆ. գիտել տուաւ թէ այդ կէտը դատա-
ւարութեան վերջը կարելի է որոշել :

Նախագահը հրաւիրեց զՅովհաննէս էֆ.
Շահնազար բացատրութիւն տալ իրեն
նկատմամբ եղած ամբաստանութեանց մա-
սին : Շահնազար էֆ. խօսք տուելով բո-
լորովին ուրացաւ իրեն վերադրուած յան-
ցանքը. ըսաւ թէ ինք արդարեւ գիշերուան
ժամը 2 1/2-3 ին միջոցները երկու մարդոց
հետ կառքով Բերայէն Պոյաճը-գիւղ Սա-
չէրեան էֆէնտի տունը գացած էր, բայց
բնաւ կուրելու, անկարգութիւն ընելու
նպատակ չէր ունեցած, այլ միայն բարե-
կամական պարզ այցելութիւն մը պիտի տար,
և արդէն Սաչէրեան էֆէնտի գէմ ինքը
չար գիտաւորութիւն մ'ալ չէր կրնար ու-
նենալ, քանի որ միշտ բարեկամ եղած էին
միմեանց և ասոր ապացոյցն այն էր որ՝ իւր
և իւր բժիշկ եղբորը միջեւ գտնուած
ցրտութիւնը բառնալու համար իրեն միջ-
նորդութիւնը խնդրած էր վերջերս : Այս-
պէս՝ Սաչէրեան էֆէնտի տունը բարե-
կամական զգացումներով մտած ըլլալով
հանգերձ, շատ զարմացեր է որ ինքը յար-
ձակման ենթարկուեր է Սաչէրեան էֆէն-
տի եղբայր Յովհաննէս էֆ. Սաչէրեանի
կողմանէ և նախատուելով, հայհոյուելով ու
ծեծուելով տունէն դուրս վաճառուեր է իւր
երկու ընկերաց հետ, և հիմակ մինչդեռ
ինքն իւրաւունք ունէր Սաչէրեաններու
գէմ դատ բանալու, Սաչէրեանք փութա-
ցած են իրեն գէմ դատ բանալու, և եթէ
զէպքին յաջորդ օրն իսկ Սաչէրեանք ա-
ղերսագիրը տուած չը լինէին, ինքն անոնց
գէմ բողոք պիտի բանար :

Նախագահը. — Գիշերուան այդ պահուն
կատարուած այդ այցելութեան նպատակն
ինչ էր :

Շահնազար էֆ. — Եղբորս Բենիամին է.
էֆէնտի կիներ իւր ամուսնոյն հետ գժտած
էր և կաթոլիկաց Պատրիարքարանն առժա-
մանակեայ բաժանում վճռած էր : Անոնց
երկու աղջիկ զաւակները Պատրիարքարանի
հոգածութեան ներքեւ գարոց դրուած էին.
մանչ զաւակն ալ հօրը քով կը գտնուէր և
զանիկոյ եւս գարոց դնել որոշուած էր.
տղան վերջերս Սաչէրեան էֆէնտի տունը
կը գտնուէր : Դէպքին օրը, ցորեկին, մայրը
Սաչէրեան էֆէնտի տունը կ'երթայ տղան
ուղեւու : Սաչէրեան Նազարէթ էֆէնտի
եղբայրը Յովհաննէս էֆ. հոն կը գտնուի և
ո'չ միայն կը մերժէ մանուկը յանձնել, այլ

և կարգ մը վերաւորիչ խօսքեր ալ կ'ընէ մօրը. ահա՛ այն ժամանակն է որ մայրը հովանոցը վերցնելով զարնել կ'ուզէ Յովհաննէս էֆէնտիին: Տիկին մը իւր վերաւորումը պատիւը վրկելու համար այդքան շարժում մ'ալ չընէ:

Նախագահը. — Ուրեմն գիշերը խաչերեան էֆէնտիին տունը գացիք՝ մօրը վերաւորումը պատուոյն դէմ վրէժխնդիր լինելու և զաւակը պահանջելու համար:

Շահնագար էֆ. — Ո՛հ. Նազարէթ էֆ. խաչերեան խօսք հասկցող և պատուաւոր մարդ մ'ըլլալով, գացինք իրմէն խնդրելու որ վերջ մը տայ այս խնդրոյն, որովհետեւ մայրը շատ զգացուած է թէ՛ իրեն դէմ եղած նախատանքին և թէ՛ իւր զաւակը իրմէն զրացուելուն համար:

Նախագահ. — Տղան հայրը, այսինքն ձեր եղբայրը, իւր զաւակը խաչերեան էֆէնտիին յանձնէր է իրրեւ աւանդ. դուք բնականաբար ձեր եղբորն իրաւունքը պաշտպանելու կողմը պիտի ըլլայիք քան թէ ձեր եղբորը կնոջ իրաւունքը. ինչպէս ուրեմն տղան՝ ձեր եղբորը կողմանէ աւանդ տըրուած տունէն առնելու և իւր մօրը տանելու յանձնելու պաշտօնն ստանձնեցիք:

Շահնագար էֆ. լռութիւն կը պահէ:

Նախագահ. — Պատասխան տուէք:

Շահնագար. — Այդ խնդիրը ուրիշ է, նախագահ էֆէնտի, այդ մասին իւր կարգին կ'ըսեմ պէտք եղածը:

Նախագահ. — Բերայէն ժամը 12 ին ձամբայ ելեր էք կառքով. քանի՞ հոգի էիք:

Շահնագար. — Երեք հոգի էինք:

Նախագահ. — Մէկը դուն էիր, միւս երկուքը ո՞վ էին:

Շահնագար. — Մէկը Լեւոն էֆէնտիին էր, այսինքն տղան մօրեղբայրը:

Նախագահ. — Մի՞ւսը:

Շահնագար. — Միւսը չեմ գիտեր:

Նախագահ. — Ի՞նչպէս չեմ գիտեր. հետ առած մարդուդ ո՞վ ըլլալը չե՞մ գիտեր:

Շահնագար. — Հիմա չեմ գիտեր, կը հասկնամ ո՞վ ըլլալը ու վերջը կը գրուցեմ:

Նախագահ. — Բայց ի՞նչպէս կարելի է այդ ո՞ր գտար այդ մարդը:

Շահնագար. — Բերա, Լիւքսեմպուրգիին տղէն պատահեցանք ու կառքը առինք:

Նախագահ. — Ուրեմն առաջուց կը ձանձնայիր:

Շահնագար. — Ժամանակաւ մեր տունը սպասաւորութիւն ըրած էր, բայց շատոնց է տեսած էի:

Նախագահ. — Էյ հիմա ի՞նչ դործ կ'ընէ եղբր:

Շահնագար. — Չեմ գիտեր:

Նախագահ. — Ի՞նչպէս չէք գիտեր, Բերայէն մինչեւ Պոյաճը գիւղ լուռ ու մունչ գացիք, ամենեւին չխօսեցա՞ք իրարու հետ:

Շահ. — Չեմ յիշեր:

Նախ. — Ըսիք թէ ժամանակաւ ձեր տունը սպասաւոր է եղեր և շատոնց ի վեր չէիք տեսած. երբ որ ձամբան պատահեցաք ու կառքն առիք, բնականաբար պիտի հարցունէիք թէ հիմա ի՞նչ գործով զբաղած է և ո՞ր է:

Շահնագար. — Բան մը չը խօսեցանք:

Նախագահ. — Այդ մարդը կառքին ո՞ր կողմը նստած էր:

Շահնագար. — Կառքաւորին քովը:

Նախագահ. — Էյ ի՞նչ պէտք ունէիք այդ մարդը կառքին մէջ առնելու:

Շահնագար. — Որովհետեւ գիշերանց լեւոնէն Պոյաճը-գիւղ պիտի երթայինք, հետեւինս այդ տեսակ մարդու մը պէտք ունէինք:

Նախագահ. — Պոյաճը գիւղ կառքը ո՞ր կեցուցիք:

Շահնագար. — խաչերեան էֆէնտիին տունը զաւակը վերջի վրայ է. մենք կառքը տանը առջեւ չը կեցուցինք ոչ թէ անոր համար որ գաղտագողի տունէն ներս մտնել կ'ուզէինք, ինչպէս կ'ըսեն մեր հակառակորդները, այլ վասն զի կառքը զաւակը վերջի վրայ կարող բարձրանալ:

Նախագահ. — Տունէն ներս ի՞նչպէս մըտաք:

Շահ. — Տանը դուռը բաց էր. տնեցիք և ուրիշ մէկ քանի մարդիկ տանը դրան առջեւ նստած էին. կ'ամբաստանուէինք թէ ծեծկուելու նպատակաւ հոն գացած էինք, մինչդեռ մենք քաղաքավարութեամբ բարեւեցինք հոն նստող տնեցիքը, և Տիկին խաչերեան ոտք ելնելով՝ զմեզ ներս հրաւիրեց: Ներսը ընդարձակ բակ մ'է. մէջտեղը ճաշի սեղան մը կայ. երկու քովերը բազմոցներ կան. Տիկին խաչերեան հրաւիրեց զմեզ նստելու. նստանք, Տիկինն ալ մեր քովը նստաւ. քաղաքավարութեամբ կը խօսակցէինք իրարու հետ, մէկ մ'ալ յանկարծ խաչերեան Նազարէթ էֆէնտիին եղբայրը Յովհաննէս էֆ. երեւան ելաւ, բարկացած դէպ ի մեզ յառաջացաւ և ուղեց տունէն դուռը վանտել զմեզ. երբ պատճառը հարցուցինք, սկսաւ զմեզ գտնակոծել. ինք էր որ զմեզ ծեծեց, մենք իրեն ամենեւին չը վարկինք:

Նախ. — Ինքզինքնիդ պաշտպանելու համար դուք ալ անոր չղարկի՞ք:

Շահ. — Ոչ, չը վարկինք:

Նախ. — Վերջը ի՞նչ եղաւ:

Շահ. — Վերջը, Նազարէթ էֆ. խաչերեան, որ վերը կը քնանայ եղեր, աղմուկէն արթննալով, չափովով վարարելով վար իջաւ և աշխատեցաւ որ խաղաղութիւնը հաստատուի և խնդիրը հասկնայ. յանդիմանութիւններ ուղղեց իւր եղբորը՝ իւր հիւրերն անպատուած ըլլալուն համար. խաչերեան Նազարէթ էֆէնտիին որ հոս ներկայ է, ճշմարտախօս մարդ մ'է. եթէ ըսածներուս մէջ սուտ մը կայ, թո՛ղ վերցնէ:

խաչերեան Նազարէթ էֆ. (ընդ միջև) — Նախագահ էֆէնտի, ծայրէ ի ծայր չինձու է ըրած պատմութիւնը:

Շահնագար էֆ. (չարուհակելով). — Յետոյ Նազարէթ էֆ. հրամայեց իւր եղբորը որ դուրս ելնէ, և զիս առնելով գէտ ի գիւղին պարտիզը տարաւ սիրտս առնելու համար. երբ վերադարձանք, Յովհաննէս էֆ. վերտին մեր վրայ յարձակիլ ուղեց. այն ժամանակ մեկնեցանք տունէն և կառքը մտնելով Բերա դարձանք:

Նախ. — Ձեր ծեծ կերած միջոցին ձեր հետ տարած մարդը չը միջամտե՞ց կառքին, զձեզ չը պաշտպանե՞ց:

Շահ. — Այդ խառնակութեան մէջ չը տեսայ զինքը, չեմ գիտեր ի՞նչ ըրաւ:

Նախ. — Իսկ Լեւոն էֆէնտիին:

Շահ. — Չեմ գիտեր:

Նախ. — խաչերեան էֆէնտիին հայհոյութիւն ըրեր էք:

Շահ. — Ամենեւին:

Նախ. — « Էտէպսիզ » ըսեր էք:

Շահ. — Այդ բառը չեմ ըսած: Խաչերեան էֆէնտիին բարի և ճշմարտախօս մարդ է. իրեն հարցուցէք թէ ըսած եմ:

Նախ. (առ խաչերեան էֆ.). — Շահնագար էֆ. ի՞նչ հայհոյութիւն ըրաւ ձեզ դէմ:

խաչ. էֆ. — « Էտէպսիզ » ըսաւ, սակայն ես այդ կէտը կը ներեմ իրեն:

Շահ. — « Էտէպսիզ » չըսի, ուրիշ բան ըսի:

Նախ. — Ի՞նչ ըսիք:

Շահ. — Ես չեմ ըսեր, Խաչերեան էֆ. ինքը թո՛ղ յիշէ ըսածս:

Նախ. — Անոր յիշածը « Էտէպսիզ » բառն է. դուք քանի որ կը պնդէք թէ ուրիշ բան ըսիք, պէտք է յայտնէք ի՞նչ ըսելիք:

Շահ. — Քանի որ իմ ըսած բառս յայտնի չէ և այդ բառին համար բողբոջած չէ, ես ի՞նչու յայտնեմ զայն:

Նախ. — Ուրեմն կը պնդէք որ « Էտէպսիզ » բառը չէք գործածած, այլ ուրիշ բառ:

Շահ. — Այո՛:

Նախ. — Լա՛ւ, Խաչերեան էֆէնտիին տունէն ամենէն առաջ ո՞վ ներս մտաւ:

Շահ. — Ամենէն առաջ Տիկին խաչերեան մտնելով, զմեզ ներս հրաւիրեց:

Նախ. — Դուք Տիկին խաչերեանէն յետոյ տունէն ներս մտաք:

Շահ. — Այո՛:

Նախագահ էֆէնտիին հրաւիրեց Տիկին Բենիամին Շահնագարի եղբայրը՝ Լեւոն էֆէնտիին՝ պատմելու եղելութիւնը:

Լեւոն էֆ. յայտնեց թէ թրքերէն չէ կարող խօսիլ. ուղեց հայերէն կամ ֆրանսերէն խօսիլ. երբ Նախագահ էֆէնտիին հրամայեց թարգման մը կանչել, Լեւոն էֆէնտիին յայտնեց թէ պիտի աշխատի կըրցածին չափ պատմելու թրքերէն լեզուաւ. եւ սկսաւ Շահնագար էֆէնտիին պատմութեան գրեթէ նման պատմութիւն մ'ընել:

Նախ. — Դէպքին օրը, ցորեկը, քրոջ հետ ի միասին խաչերեան էֆէնտիին տունը գացեր էք. ի՞նչ պատահեցաւ այն տեղ:

Լեւոն. — Քոյրս իւր զաւակը տեսնել ուղեց. զաւակը բերին. երբ տղան իւր մայրը տեսաւ, անոր շրջագլխատէն բռնեց, սկսաւ լալ եւ չուղեց անկէ բաժնուիլ. Յովհաննէս էֆ. խաչերեան տղան սենեակէն դուրս հանեց ու վեր զրկեց. մայրը վշտացաւ բնականաբար և այս ըրածին անվայել բան ըլլալը գրուցեց. այնատեն Յովհաննէս էֆ. կարգ մը նախատական ու անուանարկիչ խօսքեր ուղղեց անոր. աղւռն մայրը զայրացաւ և իւր պատիւը պաշտպանելու համար հովանոցը վեր վերցուց, բայց չը զարկաւ. Յովհաննէս էֆ. աւելի բարկանալով, զմեզ տունէն դուրս վանտել ուղեց:

Նախ. — Ձեր քրոջը այդպէս նախատուած ժամանակ, դուք ի՞նչ ըրիք:

Լեւոն. — Ես բնականաբար քրոջս պատիւը պաշտպանելու էի, այսու հանգերձ ամենեւին ձայն չը հանեցի:

Նախ. — Ձեր քրոջը նախատուելու տեսնելով, անապրեր հանդիսատէս եղաք. չղարացա՞ք, բան մը չըսի՞ք:

Լեւոն. — Բան մը չըսի. միայն դուրսը՝

փողոց հրաւիրեցի Յովհաննէս Էփէնտին :

Նախ. — Ի՞նչ պիտի ընէիր փողոցը :

Լեւոն. — Խօսէի պիտի իրեն հետ :

Նախ. — Ի՞նչ պիտի խօսէիր :

Լեւոն. — Խօսէի պիտի. քառթոս պիտի տայի իրեն. պէտք էր որ հաշիւս մաքրէի իրեն հետ :

Նախ. — Ուրեմն զայրացած էիր իրեն դէմ :

Լեւոն. — Բան մը չունէի հետը :

Նախ. — Վերջը ի՞նչ եղաւ :

Լեւոն. — Վերջը ես և քոյրս տունէն մեկնեցանք. Տիկին Խաչէրեան մեզ հետ մինչեւ նաւամատոյցը եկաւ՝ մեր սիրտն առնելու համար :

Նախ. — Ուրեմն վշտացած և զայրացած ետ կը դառնայիր :

Լեւոն. — Բնականաբար սրտերնիս նեղացաւ, մանաւանդ վախցայ որ քոյրս բարկութենէն հիւսնայ. կ'ըլլայ. այնքան վիրաւորուած էր իրեն գէմ եղած նախատինքնն :

Նախ. — Բերա գառնաւով, զո՞վ տեսաք, դէպքը ո՞րու պատմեցիք :

Լեւոն. — Շահնազար Էփէնտին սենեակը գացի ու եղածը պատմեցի. յետոյ երկուքս Խաչէրեան Նազարէթ Էփէնտին սենեակը գացինք, բայց նա հոն չէր :

Նախ. — Ինչո՞ւ գացիք :

Լեւոն. — Գացինք որ եղածը պատմենք, և իւր միջամտութիւնը խնդրենք ինքիրը կարգադրելու և տղան առնելու համար, վասն զի մայրը իւր զաւակը կ'ուզէր :

Նախ. — Դիչերը ի՞նչու համար Խաչէրեան Էփէնտին տունը գացիք :

Լեւոն. — Միեւնոյն նպատակաւ գացինք :

Նախ. — Ի՞նչու համար Խաչէրեան Էփէնտին եղբայրը դանակոծեցիք :

Լեւոն. — Մենք անոր բան մը չըրինք, ան մեր վրայ յարձակեցաւ :

Նախ. — Երբ որ ձեր վրայ յարձակեցաւ, ինքզինքնիդ չպաշտպանեցի՞ք, դուք ալ փոխադարձաբար անոր չզարկի՞ք :

Լեւոն. — Ո՛չ, չզարկինք :

Նախ. — Ձեռուրնիդ բանձա՞ր կը ժողվէր կոր :

Լեւոն. — Թեւերէն բռնեցինք որ չզարնէ :

Նախ. — Ձեր հետ եկող Յարութիւն անուն անձն ի՞նչ բրաւ այն միջոցին. կըռուռն չխառնուեցա՞ւ, գձեղ չպաշտպանեց :

Լեւոն. — Կռուռն ատենը, այն խառնակութեան մէջ, չեմ գիտեր թէ ի՞նչ կ'ընէր :

Նախ. — Կուի կ'ընէք. կռուայ մէջ ծեծը փոխադարձ կ'ըլլայ. ուրեմն դուք ալ հարկաւ անոր զարկիք :

Լեւոն. — Մենք չզարկինք :

Նախ. — Յարութիւն անուն անձն ալ չզարկաւ. կարելի բա՞ն է որ ձեր ապահովութեանը համար ձեր հետն առած ըլլաք զինքը, և ինք անկիւն մը քաշուելով՝ ձեր ծեծուելուն անտարբեր հանդիսատես մնայ :

Լեւոն. — Բաղմութիւնը լեցուած էր, խառնակութեան մէջ չկրցայ տեսնել զինքը :

Նախ. — Այդ մարդը ո՞ր է հիմա :

Լեւոն. — Ձեմ գիտեր :

Նախ. — Առաջուրնէ կը ճանչնայի՞ր :

Լեւոն. — Ո՛չ :

Նախ. — Ի՞նչ տեսակ հագուստ հագած էր :

Լեւոն. — Ինձ նման հագուած էր :

Նախագահը հրամայեց որ վկայները սրահէն դուրս ելնեն. և յետոյ մի առ մի կոչելով, անուան, մականուան, տարիքի և զբաղման մասին սովորական հարցումներէն յետոյ՝ Ս. Աւետարանին վրայ օրինական երդումն ընել տալով, զատ զատ հրաւիրեց զիրենք եղելութիւնը պատմելու այնպէս ինչպէս որ տեսած են :

Առաջին վկան էր Յակոբ Տէօքմէճեան անուն երիտասարդ մը (Աղաբէկեան Մարկոս Էփէնտին քրոջ օրդին). յայտնեց թէ Մարկոս Էփէնտին և իւր ընտանեաց հետ այցելութեան գացած էր Խաչէրեան Էփէնտին տունը ու դրանք առջեւ նստած էին. դուռը բաց էր. Խաչէրեան Նազարէթ Էփ. վերը կը քնանայ եղբր. հազիւ քանի մը վայրկեան անցած էր, երեք մարդիկ դէպ ի իրենց կը մօտենան և առանց բարեւելու, առանց բան մ'ըսելու՝ տունէն ներս կը մտնեն. Տիկին Խաչէրեան զարմացած առնոց ետեւէն ներս կը մտնէ. կ'սպասենք տեսնելու թէ ի՞նչ պիտի ըլլայ. շուտով ձայները կը բարձրանան և մենք դէպ ի դուռը կը յառաջանանք. Խաչէրեան Յովհաննէս Էփէնտին մէջ տեղ կ'եղնէ ու դուրս ելնելու կը հրաւիրէ զիրենք. Շահնազար Էփ. այն ժամանակ ձեռքի փայտով Յովհաննէս Էփէնտին գլխուն կը զարնէ, և երեքը մէկանց վրան յարձակելով, բաղմոցին վրայ կը պառկեցնեն զինքը և կ'սկսին ձեռքով ու ոտքով զարնել. ներս կը մտնենք, կը միջամտենք և կ'աշխատինք յարձակողները մէկ-մէկ առնուլ. Նազարէթ Էփ. քունէն արթննալով, վար կ'իջնէ, և այս անակնկալ տեսարանին առջեւ ապշած՝ կ'աշխատի խաղաղութիւն հաստատել, որպէս զի խնդիրը հասկնայ : Նախ իւր եղբորմէն կը խնդրէ որ քիչ մը դուրս ելնէ, և դրացիներ՝ որոնք խռնուած էին՝ կ'առնեն քովի տունը կը տանին զնա. յետոյ բանթալոն մը բերել կուտայ, կը հագնի և Շահնազար Էփէնտին իրեն հետ առնելով՝ գիւղին պարտիզին կողմը կ'երթան. քիչ յետոյ կը վերադառնան՝ իրարու հետ բանակուելի բռնուած. Շահնազար Էփ. « Ես տղան տանիմ պիտի » կը պոռար, Նազարէթ Էփ. « Ես տղան չեմ տար » կը պատասխանէր : Նազարէթ Էփ. կը հրամայէ դոցեւ տանը դուռը, Շահնազար Էփ. կ'աղաղակէ թէ գաւաղանը ներսը մնացած է ու պիտի առնէ : Վերստին գոռում գոչումը կ'սկսի. այն ատեն Խաչէրեան Էփ. հրամայեց որ ոստիկան կանչեն. երբ որ ոստիկանին ձայնն առին, Շահնազար Էփ. և իւր երկու ընկերները դէպ ի կառքը փութացին՝ փախչելու համար : Յովհաննէս Էփ. Խաչէրեան, քովի առնէն՝ անոնց կառք մտնելը տեսնելով, տունէն դուրս նետուեցաւ, վաղեց դէպ ի կառքը և անոր ընթացքն արգելել փորձեց. այն ժամանակ խաղաղանի հարուածներ իջեցուցին իրեն և կառքը քշեցին աներեւոյթ եղան : Յովհաննէս Էփ. կարծեր է թէ յաջողեցան տղան փախցնել, այդ պատճառաւ վազեր է կառքին ընթացքն արգելելու :

Միւս վկայներն էին Մարկոս Էփ. Աղաբէկեան. Յոյն երիտասարդ մը՝ որ Խաչէրեան Էփէնտին դրացի լինելով, աղմուկը լսելու և վազեր եկելու ու դէպքին ականատես եղեր է՝ ինքն իսկ միջամտելով. չոր-

րորդ վկան էր Յոյն կին մը, Խաչէրեան Էփէնտին տան սպասուհին :

Այս երեք վկայներն ալ ճիշդ առաջին վկային նման պատմեցին իրողութիւնը : Յոյն երիտասարդն աւելցուց թէ ինքն էր ոստիկան կանչելու վաղուկ : Յոյն կինը յայտնեց նաեւ որ ծեծելու պահուն՝ Շահնազար Էփ. Խաչէրեան Յովհաննէս Էփէնտին մասն ալ խած եր է :

Խաչէրեան Յով. Էփ. (Յոյն կինն ընդմիջելով). — Շահնազար Էփ. ըսաւ թէ ես իւր վրայ յարձակել և զինքը ծեծելու եմ. ես ի՞նչպէս կարող էի իրեն ձեռք վերցնել, երբ մօտս թակարդը բռնուած էր իւր բերնին մէջ :

Աղաբէկեան Էփ. շեշտելով աւելցուց թէ՝ այնպէս անխնայ կը ծեծէին որ կարծես մեռցնելու յատուկ դիտաւորութիւն ունէին :

Նախագահին հարցման վրայ թէ կառքն ո՞ր կեցած էր, Աղաբէկեան Էփ. յայտնեց թէ ի սկզբան կառքը մէջ տեղ չկար, բայց վերջի պահուն՝ Խաչէրեան Էփէնտին տանը գիւմարոքը գտնուող աղբիւրին առջեւ եկած կեցած էր :

Նախ. — Շահնազար Էփէնտին ըսաւ թէ մինչեւ տանը առջեւ կառքը չկրնար բարձրանալ, այդ պատճառաւ կառքը վարը ըսպացուցին :

Աղաբէկեան. — Սխալ է. ո՛չ միայն մարդ կրող կառքերը, այլ տան կահ կարասիք փոխադրող կառքերն իսկ մինչեւ այդ աղբիւրին առջեւ կրնան գալ, ինչպէս շատ անգամ տեսած եմ :

Չորս վկայներն ալ յայտնեցին թէ իրենք տունէն ներս մտած, միջամտած և յարձակողները մէկ-մէկ առնելու աշխատած էին :

Տունէն ներս մտնելու պարագային համար՝ միայն Յոյն կինը տարբեր ձեւով վկայեց : Մինչդեռ միւս երեք վկայները ըսած էին թէ՝ ամենէն առաջ Շահնազար Էփ. և իւր երկու ընկերները ներս մտան, յետոյ Տիկին Խաչէրեան, անկէ յետոյ ալ Յովհ. Էփ. Խաչէրեան, Յոյն կինն ըսաւ թէ՝ Շահնազարի և իւր մարդոցմէն յետոյ Յովհաննէս Էփէնտին ներս մտաւ, յետոյ Տիկին Խաչէրեան :

Նախագահը ամենուն ալ զատ զատ հարցուց թէ ո՞րոնք էին տունէն ներս մտնող և Խաչէրեան Յովհ. Էփէնտին վրայ յարձակողները և Չորս վկայներն ալ ցոյց տուին Շահնազար Յովհ. Էփէնտին և նորա հարսին եղբայրը Լեւոն Էփ. իսկ անոնց հետ ներս մտնող երրորդ անձին իրենց անձանոթ ըլլալը յայտնեցին : Նայնպէս Նախագահին հարցման պատասխանելով, հաստատեցին թէ իրենք ըսած են Շահնազար Էփէնտին՝ Խաչէրեան Նազարէթ Էփէնտինին Էտէպսիզ ըսելը :

Նախագահը հարցուց Շահնազար Էփէնտին թէ վկայներուն անձին նկատմամբ ընելիք առարկութիւն մ'ունի՞ր :

Շահնազար Էփ. առաջին վկային համար ըսաւ թէ չճանչնար զինքը, և հետեւաբար անոր վկայութեան ընդունելի ըլլալը չգիտեր : Աղաբէկեան Էփէնտին համար ըսաւ թէ, թէեւ ասկից առաջ կարեւոր պաշտօններու մէջ գտնուած է, բայց այժմ դրեթէ գործ չունի և Ղալաթիոյ Մատենադարանին Տնօրէնն եմ ըսելը ճիշդ չէ : Նախագահը պատասխանեց թէ Մարկոս Էփէնտին այժմ

ինչ գործ ունենալը խնդիր չէ, և թէ Շահ-նազար էֆ. պարտի միայն անոր անձին գէժ ունեցած առարկութիւնը յայտնել:

Աղաբէկեան. — Ամբողջ աշխարհ գիտէ որ Ղալաթիոյ Մատենադարանին Տնօրէնն եմ. սուան ո՞րն է ագոր մէջ:

Շահ. — Աղաբէկեան էֆ. խաչկրեան էֆ. Գէնտիէ շահ ունի. հետեւաբար անոր վրայութիւնը ընդ ունեւի չէ:

Խաչկրեան Նազ. էֆ. — Կը բողբոքեմ, Տէր Նախագահ, Աղաբէկեան էֆ. ամենեւին չա՛հ մը չունի ինձմէ:

Նախագահն էֆ. ինչո՞ւն Յոյն երիտասարդին և Յոյն կնոջ նկատմամբ ունեցած առարկութիւնը հարցունելով, Շահնազար էֆ. առաջնոյն համար ըսաւ թէ՛ չճանչնար զինքը, հետեւաբար անոր վրայութեան ընդունելի կամ անընդունելի ըլլալը չիրար գիտնալ. իսկ երկրորդին համար ըսաւ թէ՛ խաչկրեան էֆ. ինչո՞ւն տան ուղարկուին ըլլալով, անոր վրայութիւնն անընդունելի է:

Նախագահը չորս վայրերուն գէժ Լեւոն էֆ. ինչո՞ւն ունեցած առարկութիւնները հարցունելով, Լեւոն էֆ. կրկնեց Շահնազար էֆ. ինչո՞ւն ըրած առարկութիւնները:

Նախագահը հարցուց Շահնազար էֆ. ինչո՞ւն թէ՛ ուրիշ ըսելիք ունի. Շահնազար էֆ. պահանջեց որ Տիկին խաչկրեան եւս գատարան գայ և եղբւրթիւնը պատմէ, վասն զի վստահ է ինքը որ Տիկնոջ պատմութեամբ խնդրոյն երեւոյթը պիտի փոխուի բոլորովին: Ընդհ. Դատարանը, ինչպէս և Թընկեր Սիմոն և Զօհրապ Դրիգոր էֆ. ինչո՞ւն, յայտնեցին թէ ամենեւին պէտք մը չկայ որ Տիկին խաչկրեան գատարան հրաւիրուի Շահնազար էֆ. անդէպ իւր պահանջման վրայ: Դատարանը առանձնանալով, խորհրդակցեցան այս մասին, և երբ առեանք վերտին բացուեցաւ, Նախագահը հարցուց խաչկրեան Նազարէթ էֆ. ինչո՞ւն թէ՛ կ'ուզէ՞ որ իւր կնոջ գատարան հրաւիրուի: Նազարէթ էֆ. պատասխանեց թէ չուզեր: Այն ժամանակ գատարանը որոշեց որ ձեռնհաս պաշտօնեայ մը երթայ Պոյաճը գիւղ, և Տիկին խաչկրեանի պատմութիւնը լսէ ու արձանագրէ:

Նիստը փակուեցաւ, գատին շարունակութիւնը 15 օրուան համար յետաձգուելով:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ.

Ս. ԵՐՈՒՍԱՂԵՄ, 25 յուլիս. — Տ. Խորէն Ս. Պատրիարքը հեռագրած էր Ս. Աթուոյ Ս. Պատրիարքին՝ Ս. Էջմիածնայ Սինոդի երկու անգամեց ի Կ. Պոլիս ժամանելը երկրորդ հեռագիր մ'ալ անոնց Պոլիսէն մեկնելը կը ծանուցանէր. այս առթիւ Ս. Աթուոյ աւագ թարգմանը պահակի մը հետ ի Յուպէ իջաւ Սրբազան հիւրերը ընդունելու, ամայս 23ին ուրախութեամբ ժամ 11 ին Ս. քաղաքիս երկրորդ խաչարանը հասան Տէր-Գառնարեան Սարգիս և Սեդրակեան Արիստակէս եպիսկոպոսը և Եփրեմ ու Մեսրոպ վարդապետները: Նոյն օրը տեղս հասան նաև Տ. Սիմէօն Արքեպիս. Սէֆէրեան և Երուսողմայ Միաբան Տ. Արիստակէս վարդապետ խաչատուրեան, ի գիւնաց միաբանութեանս գիւմարեւոյ գացած էին Մամբէկ Եպիս. Անդրէաս, Եղիա և Ղեւոնդ:

Վարդապետներ, Ամենքն ի միասին կայարանէն յատուկ կառքերով հասան վանուցս արտաքին գրան առաջ, և անտի առաջնորդուեցան վանուցս ներքին գաւիթն ուր լուսարարապետ սրբազանի կարգադրութեամբն եկեղեցական դասն երկու կարգ շարուած կ'սպասէին: Երկու եպիսկոպոսաց չուրճառ ու գաւազան արուեցաւ, և ամենքն ի միասին «Հրաշափառ» շարականը երգելով, Ս. Յակոբեանց գերազուշակ տաճարը մտան, և «Որ էն» շարականի երգեցողութեամբն ուրախ և երկրպագութիւն մատուցին Գլխադիր Ս. Առաքելոյն դամբարանին, և անկէ Աւագ խորանին առաջ երթալով՝ «Ուրախ եղէ ես» Սաղմոսէն գինի՝ պահպանելով մ'աւարտեցաւ ընդունելութեան արարողութիւնը. եկեղեցիէն ելնելով՝ ուղղակի իրենց բնակութեան համար յատկացեալ վայրը (Կալի վրայ ըսուած տեղը) գացին հանգստանալու. երեկոյեան ժամ 4 ին Պատրիարքարան խորհրդարանին մէջ համագումար խորհիւնելով փառաւոր սեզան մը արուեցաւ նորեկ հիւրերուն և ժամ երկուքին աւարտեցաւ սեզանը:

Զմուռնանք ըսելու որ Սինոդական Սըրբազանք իրենց հետ բերած էին Մատթէոս կաթողիկոսին գործածած խաչն, պնակէն ու մատանին:

Հետեւեալ շաբաթ օր ժամ 2 ին, ըստ ծանուցման Սրբազան Պատրիարքի, եկեղեցական հանդէս կատարուեցաւ:

Յառաջիկայ օգոստոս 1 ին հանգիստուոր Ս. Պատարագ պիտի մատուցուի, Յակովբեանց աշխարհահռչակ Տաճարին մէջ, և օգոստոս 5 ին Սինոդական Սրբազանք Թըրեստէի ճանապարհով պիտի մեկնին տեղէս (1). իսկ Սրբազան Պատրիարք Հայրն ալ, օգոստոս 8 ին պիտի մեկնի դէպ ի Կ. Պոլիս, որպէս զի կարենայ յառաջիկայ օգոստոս 19 ին մեր առատագութ Օգոստոսիան Սուրբութանի գահակալութեան տօնին առթիւ տեղի գտնուիլ, իւր և միաբանութեանս հաւատարմական զգացմունքն անձամբ յոտոկայտերական գահայից մատուցանելու:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Որովհետեւ կրօնական արարողութեան մը համար ի մտոյ 12 եպիսկոպոսաց ներկայութիւնը պէտք պիտի լինի ի Ս. Էջմիածին, Նոր-Դար այս առթիւ կը հրատարակէ ի Ռուսիա և ի Կովկաս գտնուող հայ եպիսկոպոսաց անուններն, որք են, աւագութեան կարգաւ:

1. Վարդան արքեպիսկոպոս, Սահահնի վանքի վանահայր:

2. Մեսրոպ արքեպ. Սմբատեան, Առաջնորդ Շամափառ:

3. Գրիգոր եպիս. Աղափիլեանց, Բիշնեւի և Պետրապոլի թեմի կառավարիչ:

4. Երեմիա եպիս. Տէր-Գալստեանց, Ատենապետ Սինոդի:

(1) Շաբաթ օր, 7 օգոստոս, Աղեքսանդրիա ժամանելու և յաջորդ օրը մեկնելու են Էջմիածին ուղեւորելու համար:

ԾԱՆ. ԽՄԲ.

5. Սուքիաս եպիս. Պարզեանց:

6. Գրիգոր եպիս. Աղուանեանց, անգամ Սինոդի:

7. Ներսէս եպիս. Խիւտավէրտեան:

8. Յովհաննէս եպիս. Տէր-Յարութիւնեան, Ս. Էջմիածնի ժամօրհնող:

9. Արիստակէս եպիս. Սեդրակեան, անգամ Սինոդի:

10. Գէորգ եպիս. Սուրենեան, Առաջնորդ Ասորականի վիճակին:

11. Սարգիս եպիս. Տէր-Գառնարեանց, անգամ Սինոդի:

12. Արիստակէս եպիս. Դաւիթեանց, անգամ Սինոդի:

13. Կարապետ եպիս. Այվազեան, Առաջնորդ Ղարապաղի վիճակին:

14. Գրիգոր եպիս. Դառնակերեան:

15. Եսայի եպիս. Աստուածատրեանց, Առաջնորդ Սպահանի և Հնդկաստանի վիճակի:

Սակայն պէտք է նկատուի — կ'ըսէ Նոր-Դար — որ սոյն եպիսկոպոսներէ ոմանք հիւանդութեան պատճառով անկարող պիտի լինին մասնակցիլ կրօնական ծիսակատարութեան:

— Գահութեամբ կը լսեմք թէ Կիւտիկեան Գրիգոր էֆ. 2,500 Օսմ. ոսկի նուիրած է Արմաշու Դպրեվանուց նորակերտ վարժարանին շինութեան փոխարէն: Դպրեվանուց խնամակալութիւնն որոշեց խնդրել Ս. Պատրիարքէն՝ օրհնութեան կնիքով մը զրկել Կիւտիկեան էֆէնտիին, որոշեց նաեւ այս բարերարութիւնը յիշատակող արձանագրութիւն մը դնել վարժարանին շէնքին ճակատը:

— Յաւ. օր սրտի կը ծանուցանեմք թէ Հայ պատուաւոր վաճառականներէն և Աղգային Հիւանդանոցի Հոգաբարձութեան վաստակաւոր և բազմերախտ անդամներէն Տիգրան էֆ. Կիւմիշլիքտեան՝ 60 տարեկան հասակի մէջ շաբաթ օր աւանդեր է իւր հոգին ի Բարիդ, ուր կը գտնուէր ժամանակէ մը ի վեր: Բարիդէ դուրս բաց կառքով պտոյտի մը միջոցին, Տիգրան էֆ. սաստիկ մաւժ և իւր բնակարանը դառնալով թոքատապէ բռնուած էր: Յուզարկաւորութիւնը կատարուեր է երեքշաբթի օր, Բարիդու Հայոց մատրան մէջ: Քարանթինայի օրինաց համեմատ, իւր մարմինն առ այժմ Պոլիս չը պիտի կրնայ բերուիլ, այլ ի Բարիդ ստորերկեայ դամբարանի մը մէջ պիտի պահուի, կրկնապէս զմեռեալ:

Յուզարկաւորութիւնը երեքշաբթի օր հանդիսաւոր կերպով կատարուեր է Բարիդու Հայոց մատրան մէջ և մարմինը ամփոփուեր է Բէռ-Լաչէզի գերեզմանատունը: 40 ի չափ պսակներ նուիրուեր են գաղաղին և բարեկամաց կողմանէ գամբանականներ արտասանուեր են: Աղգ. Հիւանդանոցի Հոգաբարձութիւնն եւս հեռագրած էր ի Բարիդ Տ. Եղուպեանին, որ գաղաղին վրայ ի դիմած Հոգաբարձութեան պսակ մը դնէ, ի նշան խորին ցաւակցութեան:

Նոյնպէս ցաւօք կը լսեմք թէ, ի Զմիւռնիա հրատարակեալ «Մէտէօրէա» հանդիսի խմբագիր Գրիգոր Մսերեան զո՛հ գացեր է տիրող համաճարակին, Ողբացելոյն թաղումն և յուղարկաւորութիւնը խիստ պարզ կերպիւ տեղի ունեցեր է համաճարակին, ի նախազգուշութիւն: Դադարը գերեզմանատուն փոխադրուել է ընդ հսկողութեամբ թաղապետութեան: Երկու փառաւոր պատկենը զրկուել են, մին քաղաքին հայ երիտասարդութեան և միւսը հայ ընթերցատան կողմանէ որուն անգամ էր հանգուցեալը:

— Յունաց Ս. պատրիարքը երեքշաբթի օր Եէփի-գուլէ երթալով, Յունաց հիւանդանոցին այցելելէ յետոյ, այցելեց նաեւ մեր հիւանդանոցը:

— Էստեան Տեառն մայր՝ Տիկին Աննա Էստեան իւր ծախիք վերաշինել տուած է Արմաշու Դպրեվանոց ջրուղին, երկաթէ նոր խողովակներով և նոր ջրաբաշիններով:

— Վաճառական Յովհ. Էֆ. Յակոբեան մէկ հալ (385 1/2 եարտա) ընտիր ապա նոյն իրաւ է Աղդ. Հիւանդանոցի Որբանոցին, 200 է աւելի որբ տղայոց զգեստ շինելու համար:

— Կեսարիոյ Ս. Կարապետի վանքին մէջ հաստատուալ Գէորգ-Էստեան ժառանգաւորաց վարժարանէն այս տարի ելած են հինգ չրջանաւարտներ, որք են Վահան Կ. Քիւրքճեան՝ Ներդէցի, Գարեգին Ն. Նահապետեան՝ Կէփէրէկցի, Հմայեակ Մ. Ուղարլըեան՝ Էփէրէքցի, Ներսէս Զ. Տէր Ստեփանեան՝ Ներդէցի և Խորէն Կ. Քէօլէեան թաւաքցի: Ասանցմէսմանք վարդապետութեան և այլք վարժապետութեան պատրաստուելու համար տարի մ'եւս վարժարանին մէջ պիտի մնան և իրենց ուսմունքը պիտի կատարելագործեն փրկսոփայութեան, իրաւագիտութեան, բնական գիտութեանց, Ֆրանսերէնի և Անգլերէնի մէջ:

— Ռոտոսթոյի աղղային վարչութեան կողմանէ երեք աշխարհականէ և մէկ քահանայէ բաղկացեալ պատգամաւորութիւն մը գալով մայրաքաղաքս, յանուն տեղւոյն ժողովրդեան Ս. Պատրիարքէն խնդրեց Ռոտոստո վերադարձնել իրենց սիրեցեալ Առաջնորդն Տ. Հմայեակ եպիս. Գիմարսեան: Ս. Պատրիարքը խոստացաւ վերադարձնել:

— Հրամանաւ Ս. Պատրիարքին, կիւրակէ օր վարդապետական ծայրագոյն աստիճանն ստացաւ Գարակէօմբլիկի քարովիչ Տ. Եղնիկ վարդ. Գալփագճեան:

— Կիլիկիոյ Ամէն. Տ. Մկրտիչ Կաթողիկոսը գրած է ի Պատրիարքարան թէ, Եօզատի առաջնորդական տեղապահ կարգած է Կէօնլըեան Տ. Յակոբ վարդապետը:

— Մարրի-գիւղի թաղ. Խորհրդոյ անգամ ընտրուեցան Տեառք Սեպուհ Բլատեան, Յովհաննէս Նուրեան, Պողոս Քնէկեան, Վառդգես Մանուկեան և Բարսեղ Խուպէսէրեան:

— Սիւլուսարի Ս. Կարապետի թաղական ընտրուեցան Տեառք Դարեգին Շիրինեան, Յովսէփ Եսսուֆեան, Ալիքոսան Ալիքոսեան, Նշան Վալիտեան և Մարտիրոս Կարմիրեան:

— Մէշտուտեան Երկսեռ վարժարանին միջանակաց և վկայականաց բաշխման հանդէսն անցեալ կիրակի օր,

չբեղ կերպիւ տեղի ունեցաւ ընդ Նախագահութեամբ Տ. Հմայեակ եպիսկոպոսի: Կրթական նախարարին կողմանէ ներկայ էր Մէհմէտ Էսաթ Էփէնտի: Այս տարուան ընթացաւարտներն են՝ Պարոնայք Խաչիկ Ռաֆայելեան, Նշան Նաղարեան, Արշակ Խթիւճեան, Սեփոն Պրպէրեան, Հրանդ Եաղուպեան, Վրաւմ. Իշլէմէճեան և Գրիգոր Բարաշեան:

ՄԵՐ ՇՈՐԻՋՈՆԷՆ ԴՈՒՐՍ

Ֆրանսական նոր խորհրդարանի ընդհանուր ընտրութիւնը կատարուեցան որոշեալ թուականին և ստուար մեծամասնութիւն մը առին չափաւոր հանրապետական կուսակցութեան:

Այդ կուսակցութեանէն այժմէն ընտրուած են 350 երեսփոխան և մեծ հաւանականութիւն կայ որ համեմատականի մնացած 160 աթոռներէն առ նուազն 100ը նոյն կուսակցութեան կը վիճակի:

Այս գէպը որ Զաթախիչ պարտութիւն մ'է ծայրայեղ կուսակցութեանց, մեծ կարեւորութիւն ունի ոչ միայն Ֆրանսայի՝ այլ նաեւ բովանդակ աշխարհի համար: Ֆրանսա պիտի ունենայ գէթ չորս տարուան համար չարունակեալ որոշ և չափաւոր քաղաքականութիւն մը թէ՛ ներքին և թէ՛ արտաքին խնդրոց նկատմամբ. և մեծամասնութիւնը ծայրայեղ տարրերէն անկախ լինելով կառավարութիւնը չպիտի հարկադրի յաճախ հակասական ըլլալ շինումները և ներքին մերթ աջակողմին և մերթ ձախակողմին:

Հանրապետութեան այս յաջողութիւնը Բանտայի գայթակղութենէն վերջ, շատ ուշադրաւ է և կրնայ վերադարձիլ բազմաթիւ պատճառներու, մասնաւորապէս հանրապետական կառավարութեան վերջին յաջողականներուն ի Սիամ և ի Տահիմէյ, թէպէտ և Պէհմէշին դեռ անձնատուր չեղաւ և Տօսս զօրավար ըյս պահուն իսկ կը պատրաստուի նոր արշաւանք մ'ընել գէպ ի հիւսիս, զայն հնազանդեցնելու համար:

Ռուսական լրագիրք ցնծութեամբ կ'ողջունեն Ֆրանսական ընտրութեանց արդիւնքը և մասնաւորապէս Քլէմանսօի կուսակիցներուն ձախդրածքը: Յայտնի է թէ Քլէմանսօ, մինչեւ վերջին ժամանակներս, առանց երբեք նախարար լինելու, խիստ մեծ ազդեցութիւն ունեցած է Ֆրանսական գործոց ընթացքին վրայ: Սակայն իւր մերտերմութիւնը կաշառատու Քորնէլիուս Հերցի հետ զինքը կապած ըլլալը ըրած է Ֆրանսացոց մեծագոյն մասին որք զինքը կ'ամբաստանեն իրեն Անգլիոյ վաճառեալ և հետեւաբար թշնամի Ֆրանք և Ռուս դաշնակցութեան: Ահա այս ամբաստանութիւնն է որ մեծապէս նուազեցուց քլէմանսօի ժողովրդականութիւնն և վարկը. և արգելք եղաւ իւր ընտրութեան որ համեմատական չի մնացած է:

Նոյն իսկ այս ընտրութեանց միջոցին տեղի կուենայ Ֆրանսայի հարաւային կողմէ Էկ-Մորթի աղահանքերուն աշխատութեանց աւթիւ Ֆրանսայի և Իտալացի գործաւորաց միջ ծանր կռիւ մը, Ֆրանսական կառավարութիւնն անմիջապէս քննութիւն կը հրամայէ և կը հաստատուի թէ Իտալացիք նախարարձակ եղած են: Այսու հանգերձ Իտալական գանգատանաց տեղի

չտալու համար՝ նախարարապետ և ներքին գործոց նախարար Պ. Տիւրիլլի առժամապէս կը գաղթեցնէ իր պալատէն Էկ-Մորթի քաղաքապետը որ Իտալացոց հակառակ յայտարարութիւն մ'ըրած էր: Թէպէտ և Իտալական ժողովուրդը շատ կը յուզուի և Թիւրինի և ուրիշ քաղաքներու մէջ Ֆրանսայի հակառակ և Գերմանիոյ համակիր ցուցեր տեղի կ'ունենան, սակայն Իտալական կառավարութիւնը չուզելով աւելի ցրտացնել Ֆրանսայի և Իտալիոյ յարաբերութիւնները, իւր գահունակութիւնը կը յայտնէ Ֆրանսական կառավարութեան ազդու տնօրինութեանց և անկողմնակա լութեան համար: այս կերպիւ կը փակուի այս կընճառս խնդիրը:

Արգէն Ֆրանսայի և Իտալիոյ յարաբերութիւններն այս միջոցիս վերտախի բաւական ձգտեալ են նաեւ Հապէշիտանի Մէնէլիք թագաւորին պատճառաւ որոյ անկախութիւնը կը ճանչեն Ֆրանսա և Ռուսիա մինչ Իտալիա կը փափաքի որ Մէնէլիք նըկատուի իրեն Իտալիոյ հպատակ:

Միւս կողմանէ որոշուած է, կ'ըսեն, որ Իտալիոյ գահաժառանգ, Նափօլի իշխանը ներկայ գտնուի Գերման բանակին աշնանային մեծ մարզանքներուն որք այս տարի տեղի պիտի ունենան Ալզաս Լորէնի մէջ:

ԳՐԻԳՈՐ ԶԱՔԱՐԱՆ

ԷՆԿԵՐԻԻ ԴՍԱՄԱՐՏԵԱԼԲ

Էնկերիի եղեռնադատ ատենին կողմէն դատաւարտեալ Հայոց սահմանուած պատիժներն են.

Մահու դատաւարտեալք. — Դանիէլ վարդապետ, Անտօն Ռչտունի, Յակոբ Զէպիտելիքեան, Կարապետ Թումայեան, Յովհաննէս Քայայեան, Կարապետ Ալաճաճեան, Բարսեղ Տէօքմէճեան, Կարօ Քերթմանեան, Յակոբ Բէհլու, Միսաք Քէշէճեան, Մարտիրոս Զիվանեան, Յովհ. Արզումանեան, Փանոս Արզումանեան, Կիւլպէնի Բարսեղեան, Միրիճան Կէզիր-Թորոսեան, Միսաք Պետրոսեան և Թորոս Կիւրինցի. — 17 անձինք:

15 ամեայ բերդապետութեան դատաւարտեալք. — Յակոբ Տէպաղեան, Քարովիչ պատուելի Մարտիրոս, Մկրտիչ Փափաղեան, Արթին Գրիգորեան, Գարբիէլ Վառնուկեան, Կարապետ Կիւրինցի. — 6 անձինք:

10 ամեայ բերդ. դատաւարտեալք. — Յակոբ Զօլաիեան, Սաեփան Պոյաճեան, Սինեքերիմ Քէպաղճեան Մամաս Յովհաննէսեան, Յակոբ Տօլանեան, Միհրան Վարդանեան, Քալպաճը Մօմօ, Յարութիւն Սիմօսեան, — 8 անձինք:

Եօթամեայ բերդ. դատաւարտեալք. — տիկին Սուրբիկ, Կառապան Յովհաննէս, Յովհաննէս Քարաքիւլաճեան, Դանիէլ Քարաբարսէղեան, Սաջատուր Օղլաքճեան, Գալստ Ուզունեան, Ղազարոս Աստուրեան, Սարգիս Մէտիլեան, Փաստաբուն Արսէն, դատաւոր Շաւարշ, — 10:

Ընդ ամենայն ԿՂ դատաւարտեալք:

Ամբաստանեալներէն Ռուբէն Զէվաճիրճեան՝ խռովայոյց գրութիւնները կառավարութեան յանձնած և Անտօն Ռչտունիի ու Կիւլպէնի Բարսեղեանի ձերբակալումը դիւրացնելուն համար դատաւարտութեան ազատ մնաց, միայն երկամեայ պայմանաժամուռ ոտակական հսկողութեան ենթարկեցաւ:

Մնացեալք անպարտ արձակուեցան:

— Պոլսոյ Արհեստից վարժարանին աշակերտաց այժմու թիւն է 348: Կուսանին հիւսնութիւն, դարբնութիւն, ձուլիչութիւն, կողպարարութիւն, թուրքերէն վիմագրութիւն, կողակարութիւն, ձեւագրութիւն, և դերձակութիւն: Վարժարանին տարեկան եկամուտն է 8250՝ ոսկի որուն 7500 ոսկին կը գոյանայ Ղալաթիոյ Գոմօսին խանի վարձքէն. 400 ոսկին Բ. Դրան մօտ գտնուած խանութներու վարձքէն, և 350 ոսկին եկնիչերէն երու ցուցահանգիտին մուտքէն: Կը վճարուի 2650 ոսկի ուսուցիչներուն և պաշտօնէից, 3000 ոսկի ուսանողաց սնունդին և հանգերձեցիւնաց, և 2600 ոսկի՝ արհեստանոցներուն ծախսուց: Ուսանողը կ'առնուին ամէն ազգի հասարակութեանց որբ տղաքներէն:

— Սերաստիայէն կէս ժամ հեռուն գրտնուած վանքի շրջակայ անտառին մէջ՝ անցեալ ամսոյ 25 ին հրապէն մը պայթելով, մօտը գտնուող ստալիկներ խուզարկութեանց ձեռնարկեր և ձերբակալեր են Սերաստացի Քիւրքճեան Արմենակ անուն Հայ մը, որ բէլովներ ի ձեռնին կը փախչէր: Արմենակ հարցաքննուելով ըսեր է թէ պայթած հրապէնէն ելած գնդակը Սերաստացի Օնոպալեան Սիմոնի հանգիւղած լինելով, ինք փախչիլ սկսեր է, և թէ դիակը անտառին մէջ կը գտնուի: Դիակը յետքննութեան թաղուեր է:

— Թէլքէրէ չունեցող անձինք այսուհետեւ սեղանաւորութիւն չպիտի կրնան ընել և կառավարական պաշտօնատանց մէջ իրենց գործառնութիւնք պիտի արգիլուին:

— Արեւելեան ձեւընթաց կառախումբին երթեկութիւնք դադրեր են՝ Զարիպուտ երեքօրեայ քարանթինա հաստատուած լինելուն համար:

— Մայրաքաղաքիս խմելու ջուրերը միքորովաբանական տեսակէտով քննելու համար բժշկական վարժարանին մէջ առանձին շէնք մը պիտի կառուցուի:

— Պրուսայի մէջ սառնոցի գործարան մը հաստատելու համար արտօնութիւն խընդրուած է:

— Ակնայ մէջ անցեալ ամսոյ 26 ին ծին օլլը Ապտիւրրահմանի որդին խեղդամահ ըրեր է նոյն տեղացի Պօլոս անուն անձը: մարդասպանը ձերբակալուեր և հարցաքննուելով խոստովաներ է թէ այդ ոճիրն ինքը գործած է՝ Պօլոսին դրամները կողոպտելու համար:

— Գետնախնձորի մշակութիւնը հինգ տարուան համար տասանորդի տուրքէ ազատ թողուած էր: Հինգ տարին լրացած լինելով, տասանորդը պիտի գանձուի: Իսկ յառաջիկայ տարւոյն համար, գետնախնձորի տասանորդն ալ նուազուողի պիտի դուրս աւանդուի նման:

— Քաղաքապետը խնդրու միջոցներ ձեռք առած է Պոլսոյ ամէն կողմերը հասարակաց առողջութեան վտանգ սպառնացող աղտեղութիւնները բնաջինջ ընելու: Այլ և այլ երկիրներու մէջ առ այժմ տիրող համաճարակին դէմ մայրաքաղաքս պաշտպանելու համար հաստատուած Բարանքիմաներն եթէ ըստ ոմանց բաւական իսկ համարուին, տեղական անմաքութիւնք կրնան այս եղանակիս մէջ յաճախ ծնունդ առաւ տարախոխի ախտերու որոց հետեւանքըն աղետարեր կրնայ լինել. ուստի հասարակութիւնը կը հրաւիրենք ձեռնտու ըլլալու քաղաքապետական պաշտօնէից ջանքերուն. ամէն սք թող զեկուցանէ առոր անկ է հանրային ու մասնաւոր շէնքերու և փողոցներու աղտեղութիւններն ու գարշահոտութիւնները:

Ե. Գ. ՓԱԼԱԳԱՇԱՆԻ ԳԱՍԱԳՐԵՐԸ
Տեղագրութիւն Կ. Պոլսոյ և շրջակայից, 100 փարա:

Աշխարհագրութեան Նախապատրաստական Դասագիրք, 3 զրշ:

Աշխարհագրութիւն Պատկերազարդ, 4 զրշ:

Թուագիտութեան Նախապատրաստական Դասագիրք, Մտաւոր և Գրաւոր 3 զրշ:

Թուագիտութեան Նոր Դասագիրք, Տեսական և Գործնական, երեք մասերու բաժնուած: — Իւրաքանչիւր մասը 4 զրշ, երեք մասերը միասին կազմուած՝ 10 զրշ:

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ. Տալի և Թասերգուրիւնք, Նամականի, Դամբանական, Տապանագիր: Հաւաքեց Բարսեղ Ե. Էքսէրճեան: Գին 15 զրշ:

ՊԱՏԿԵՐ ԱՇԽԱՐԻԿ ԴԻԱԿԱՆՈՒԵԱՆ Ա. րեւմտեան Հայոց ի վերջ կոյս ժ. Դարու. ընդ խնամով Յ. Գուրգենի. հատոր Բ., — Գին 100 փարա:

Նոր Բաւարան երեկեղուեան Անգղիերէնէ Հայերէն և Հայառաւ Թուրքերէն. յորինեց Մ. Գ. Մինասեան: Գին 50 զրշ:

Օտ: իւրան 100 զրշ. էն

Մէճիտիկ	108	Բուսիոյ բօլ	90 21
Քառորդ մէճիտ	107	Նարուէն	87 22
Մանր մէճիտ	103	Գրիսից	51 18
Մէթալիք	97	Անգլ. իւրա	110 9
Գանալիտ	24 03	Բուս. երկ.	84 75

Մանէթ թղթադրամ 8 72

ԱՐՏՈՒԱՏԻՐ Ա. ՍԱԲԱՅԵԱՆ
ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ
Խսկի-Զապիէ փողոց. քալ 61

ՀԱՐԱՏԱՆԱԼՈՒ ՄԻԱՒ ՄԻՉՈՑ

ՄԵՆ՝ ԳԱՐԳԵԻՆ

300,000 5,000

1870 ին կայսերական զորավարական ելած Արեւելեան երկրամասից պայրատնութեան մինչեւ ցարդ 30,000,000 ֆր. պարգեւ տրուած է, և թէ ի Պոլս և թէ ի դաւառ հարստացած են 70,000 է աւելի անձինք:

Աշխարհի ամենէն չափաւոր վիճակահանութիւնն է այս: Տարւոյն մէջ վեց անգամ տեղի կ'ունենայ, երկու ամիսը մի անգամ: Ետեւ ձեռնարկէ 19 ին Արքունի փողերանոցին մէջ կառավարական պաշտօնէից հօկողութեան ներքեւ տեղի պիտի ունենայ 142 րդ վիճակահանութիւնը, և 600 անձինք պիտի չափին հետեւեալ պարգեւները:

1 անձ	300,000 ֆրանքէն	300,000
1 »	25,000 »	25,000
2 »	10,000 »	20,000
6 »	2,000 »	12,000
12 »	1,250 »	15,000
28 »	1,000 »	28,000
550 »	400 »	220,000
600 »	»	620,000 ֆր.

Օտ. Կայս. Պօրտալի Գանձապահ Գլխորդ Էֆէնտիկի Գրամատունն այս անգամ հրապարակ հանած է նոյն պարատնութեան բաղդատունները, որք երաշխաւորեալ և վաւերացեալ են Օտ. կառավարութեան յատուկ դրոյմթութեով և կնքով:

Հաւոր 7 1/2 լիւռ

Նահող թուոց ցուցակներն ու պարգեւներն անմիջապէս իրենց հասցէներուն կը դրկուին. Գաւառներէն ուն չափաւոր վիճակահանութեան մասնակցի փախադուր պարտին տոմարի գինն (դրամի տեղ նամակադրոյճ եւս կ'ընդունուի) փոստի ծախքով ի միասին դրկել առ:

Տնօրէնութիւն ԳԵՐԳ ԳԵՂՈՃՅԱՆ ԳՐԱՄԱՏԱՆ

Ղալաթիա, Դամբանի խան, Կ. Պոլս

در علیاده غلطه قوسيون خاندہ کفوق قیجیان باقسه

Հեռագրի համար. Ղալաթիա, Դըլլճեան: